

Ամբաս Բիւրօս

Կոմբագրու թիւն «Փիիկնիկ» Ի
Աղեֆուսնցրի:ս



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ԼԵՅԱՄՍԵԱՑ 26

ՏԱՐԵԿԱՆ... 15
ԼԵՅԱՄՍԵԱՑ 8

ՔԱՃՆԵԳԻՆԸ
ԿԱՆԵԿԻ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6

ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԲԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ 1 ՄԱՅԻՍ 1902

ԹԻԻ 51

ՈՒՇԱԿԻՈՒԹԻԻՆ

Ահա՛ Մէկ թիի մնաց
Փիիկնիկի Բ. Տարեշրջանը լրա-
նալու. կը խնդրենք որ Պատ.
բաժանորդները փութացնեն ի-
րենց վճարումները:

ՈՎԱՍՏՆԱ. - ԲԱՐՁ Ի Մէն.Չ

Ա.

1902 Մարտ 23ի Կիրակին է, Աղեքաան-
դրիոյ հայու թիւնը տօնի մէջ է. Ս. Պօղոս
Պետրոսի շրջափակը խոնամ է մարդկային
ալիքներու ամբոխ մը: Մանկապարտէզը,
մեր ապագայ յոյսերուն բուրաստանը, փոխ-
ուած է ժողովասարահի մը. սեղանի մ'առ-
ջեւ նստած է Աւագ-Երէցը, շուրջը կար-
գով շարուած բազմած են Ռնարող. Ժողո-
վին անդամները, արձանագրութեան դպի-
րները. սեղանին վրայ դրուած է Քուէտու-
փը. քիչ մը հեռուն, սրահին մէջ կանգնած
կ'սպասեն ընտրողները, որոնց թիւը կըստ-

ուարանայ հետզհետէ. դուռը բռնած է եր-
կայն հասակով կտրիճ մը, որ ներս կը
մտցնէ դուրսը խոնոզ անհամբեր ամբոխը:
Սկսաւ գործողութիւնը. քուէները կարգով
կը բերուին կը ձգուին քուէտուփին մէջ:
Յանկարծ կը լսուի շշուկ մը, մէկը ներս կը
մտնէ, Վսեմաշո՛ւք մը. Բաշա՛ն է, կը ձեղ-
քէ կ'անցնի ամբոխին մէջէն ու կերթայ
կը բազմի թիկնաթոռին վրայ. երջանկու-
թիւն կը կարգաս բոլոր զէմքերուն վրայ
ու պատկառոտ հիացում մը բոլոր աչքե-
րուն մէջ. կ'անցնի մէկ երկու րոպէ ու
Բաշան ոտքի կ'ելնէ. քուէթուղթ մը ձեռ-
քը, կը ներկայանայ դպիրներուն, կ'ստո-
բազրէ արձանագրութեան տետրակին մէջ
իր անունը, ահնածանքով կը մօտենայ
քուէտուփին, ուր հետեւէ առաջ քուէ-
թուղթը, լսելի ձայնով մը կ'արտասանէ.

«Ես ալ իրաւունք ունի՞մ»:

Յուզիչ տողանցութիւնն է մեր Աղդ.
Օրէնքին հաւատացեալներուն ու մենաշը-
նորեակներուն — ընտրողներուն — որոնք,
5-6 տարի առաջ, զաղթականներ, տարա-
դիրներ, արհամարհուած քառիանե՛ր էին,
եւ որոնք սակայն, օրէնքին վահանին տակ,
քաղաքացիներ են այսօր, հաւասար՝ իրա-
ւունքով ու հաւասար՝ ազատութեամբ:

Նորէն շշուկ մը, թէ եւ ո՛չ նախըն-
թացին չափ որոշ ու յստակ. ուրիշ մէկը,
սպիտակալիք մ'է որ ժարդկեղէն ալիք-

ներուն մէջէն կուգայ կ'անցնի բազմեւու
գահը. Սբբազանն է, ալեգարդ Առաջնորդ-
նիս. պիտի նախագահէ, գոնէ ձեւի համար,
ընտրական գործողութեանց:

Հո'ն է հո'ն, ներսն ու դուրսը, սրա-
հին մէջ ու շրջափակը. հո'ն է հայ ժողո-
վուրդը, հո'ն են Տառապանքի Երկրին զա-
ւատները, որոնց վրայէն կարծես դեռ հոտը
կուգայ արիւնին, որ ներկեց հայրենիքը.
որոնց ձորձերէն դեռ կը թափթփին մոխիր-
ները հրդեհուած վանքերուն, տաճարնե-
րուն ու տուներուն. հո'ն է խոնաւ խանե-
րուն պող պատերուն գոյնը դեռ երեսին՝
պանդո'ւխտ հայրը, մեռած ողջը, որուն
այրին՝ իր անտերունչ որբերուն համար
արցունքի հա'ցը կը հայցէ անոր, պան-
դուխտ հորը քրտինքէն. Յաւին ու Վէրքին
ղինուորը հո'ն է. հո'ն է Վրէժին առաքեալը,
հո'ն Բանտին մարդը, որ դեռ չի կրնար
հաւատալ իր երջանկութեան. բանուոր, արհես-
տաւոր, վաճառական, հողի մշակ ու մտքի
մշակ. շուկայի մարդն ու փողոցինը. հայ
բազումն ու հայ միտքը. հաւաքածո'յ մը
հինգ դարերու պրկող շղթաներու մէջ հեծող
ցեղի մը բեկորներուն, որոնք Փարսաւոնի
այս աւազուտը, օստիս մը փնտուել եկած են
Իրաւունքի ու ազատութեան ծարաւէն
պատակող իրենց հոգիներուն:

Ու այս հաւաքածային կուրծքէն աղա-
ղակ մը փրթաւ.

ԿԵՑՑԷ՛ ՊՕՂՈՍ ԲԱՇԱՆ :

Ծափեր ու ծափեր յաջորդեցին այդ
կեցցէներուն, որոնք վերսկսան անվերջա-
նալի' . . . :

Աղեքսանդրիոյ հայութեան շրթունքէն
թոած այդ կեցցէներն ու իրար եկած միա-
ցած այն ձեռքերուն ծափերը կ'ըսէին.

**ԿԵՑՑԷ՛ ՍԱՀՄԱՆԱԴԲԱԿԱՆ ԹԱՂ. ԽՈՐ-
ՀՈՒՐԴԸ.**

Բաշային շալը, սրահը մոռցուած շալն
անպամ ծափահարուեցաւ, որովհետեւ Օրէն-
քի պաշտպանին, Եգիպտոսի մէջ Արդարու-
թեան հիմնադիր Մեծ Նուպարի Որդիին,
Վսեմ. Պողոս բաշային ծունկերը կը տաք-
ցընէր այն շալը:

Ովսանեա՛, Ովսանեա՛, Ովսանեա՛, այս
եղաւ ամբողջ Կիրակին ատուերնէ մինչեւ
Էրկիուն, մանկապարտեղի սրահը, Ազգ.
Խորհրդարանը, շրջափակը ու տաճարին մէջ
լսուած աղաղակը :

Մութը կոխած էր, խնդամոլ ամբոխը

ցրուեցաւ, հետը տանելով անշնջելի այդ
պատմական օրուան պատկերը: —

Բ.

Նոյն տարուան Մայիսի 18 ի Կիրա-
կին է. նոյն շրջափակը, նոյն տաճարը. ժա-
մերգութիւնը մօտ է աւարտելու. խլրաում
մը կայ հաւատացեալ ամբոխին մէջ. Տա-
ճարին ու Ազգ. Խորհրդարանին միջեւ բան
մը կը դառնայ, կառքեր կուգան կը մնան
Ազգ. Առաջնորդարանին կուշտը. կառքերուն
մէջէն դուրս ել'ող անձերը, տաճարը կը
մտնեն, քիչ յետոյ դուրս կ'ելնեն ու կըշ-
տապեն սանդուխներէն վեր ելնել, Խորհրդ-
դարանը. բակը խոնած ամբոխին մէջէն
ձայներ կը բարձրանան.

ԱՆԿՑԻ՛ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ :

Մարդ մը, ժողովուրդին անձնաւո-
րումը, անոր արդար զայրոյթին մարմնա-
ցումն ու թարգմանը, սանդուխին վերին
աստիճանը կեցած, թերթ մը ձեռքը, բարձ-
րաձայն կը կարգայ.

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԲՈՂՈՒԷ.

Այո՛, ժողովուրդը կը բողբէ:

Ջրկողին ու զրկուածին հանդիպումը
դիտեցէ՛ք: Ջրկուածը՝ ժողովուրդն է, իր
ամենասուրբ իրաւունքներէն. Ջրկողը, ո՛հ,
ո՛վ պիտի հաւատայ, զրկողը՝ Մարտ 23 ի
ծափահարուածը, փառաբանուածը, Ովսան-
եաներուն առարկան, օրէ՛քի պաշտպան,
Արդարութեան Հօր Որդին է: Բայց ինչո՞ւ
այս յեղաշրջումը:

Սպասեցէ՛ք.

Պատմական Կիրակիէն ի վեր քանի՛
քանի Կիրակիներ անցան, գիտէ՛ք. Ծաղկա-
զարդ, Ձատիկ, Նոր Կիրակի, եւն. Ս. Տա-
ճարի խորանէն ի՛նչ սրտաշարժ քարոզներ
թափեցան ամբոխին գլխուն: Ալեգարդ Սըր-
բազանին բերնէն հոսած յուսատու խօսքե-
րը՞, անոր սրբազան աջովն անցեալին վրայ
քաշուած վարագոյրը՞, իր անձին անխղճօ-
րէն անտես թողուած խոհեմութեան ջատա-
գովութիւնը՞, նորընտիր Թաղական Խոր-
հուրդին Սահմանադրականութիւնը՞, անոնց
ամենատուար քուէներով ընտրուելը՞,
քանի մը ողորմելի բողոքարկուներու բո-
ղոքին չ'եղեալ նկատուելը, տեղեկագիրը
չ'ատորագրողներուն ոչնչութիւնը՞, Սեպտ.
1 ին Գայթակղութեան հեղինակութիւնը
միայն եւ եթ Րէիզեան Պէյի վերագրուելը
դեռ թուե՞նք, այն պատմական Կիրակիէն ի
վեր անցած դարձած խաղբութիւնները՞ . . . :

Սակայն այս ամենը տեսաւ ժողո-
վուրդը, տեսաւ ու լռեց. . . .

Պզտիկ բան մը կար որ չէր կրնար զիտնալ ժողովուրդը, ան բանը մութի մէջ կը դառնար, լոյսէ ու աչքէ հեռի . բա՛րձր շրջանակներու մէջ :

Ու այդ պզտիկ բա՛ր դառնալով ու դառնալով խոշոր բան մ'եղաւ, նախ ամպի կտորիկ մը, վարդագոյն հորիզոնին երեսը, յետոյ ամպերու կոյտ մը, ու ի վերջոյ, կապոյտը պատող կապարէ կափարի՛չ մը . . . :

Տեսնողները միայն կը նշմարէին այդ սեւ տեսարանին մէջ ստուերներ, որ թափոր կը դառնային մեծ Ստուերին բոլոր-տիքը : Ժողովուրդին ընտրուածները մէկ անգամ տիրացած իրենց բարձին, իրենց աթոռին, կոխկառել ուղեցին ժողովուրդը, թքան անոր կամքին վրայ ու իրաւունքի՛ն ալ :

Առաջնորդ ու Պատրիարք, ծովուն մէկ ծայրէն միւսը, խօսեցան իրարու հետ. ի՞նչ խօսեցան, զաղտնի է . բայց յայտնի բան մը կայ. Թաղ. Խորհուրդին տեղ՝ Խնամակալութիւնը : Ուստի ամբողջ կ'աղաղակէ :

«ԱՆԿՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ» :

Խնամակալութեան ստեղծողն ու նախախնամողը լսեց այդ աղաղակը . ելաւ գահէն, տատանեցա՛ւ Ոլիմպոսը. քովի արբանեակները դողահար, ետ ետ հրուեցան . դահլիճը դղրդաց. Խնամակալը զայրացա՛ւ .

Սակայն մեր Մարդը «ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՈՂՈՎՆԻ» կը կարգայ բարձրաձայն, ու ամբողջ կը պոռթկայ :

Վար իջաւ Մեծ Մարդը, ո՛չ կեցցէ՛, ո՛չ ծափ, աղաղակը միայն կայ .

ԱՆԿՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ :

Մեծ Մարդը Պզտիկ Մարդուն ձեռքէն յափշտակեց թերթը, խեղդել փորձեց Չայնը .

Զրկուած ու Զրկող հիմայ դէմ առ դէմ են :

Զրկողները՝ ընտրուածներն են, որոնք արհամարհեցին քուէները .

Զրկուածները՝ ընտրողներն են, որոնք ոտիկանութեան ձեռքը պէտք է յանձնուին : Զի, բողոքը՝ ոճիր մ'է, բողոքողները՝ ոճրագործներ, պատժել պէտք է, բանտարկել, աքսորել, կախել . . . :

Սակայն, նայեցէ՛ք, Մեծ Մարդուն զիտուն վերեւը կը շողայ կշիռ մը : Արդարութեան կշիռը, որուն նժարներէն մէկուն մէջ դրուած է Օրէնքը, միւսին մէջ՝ Կամայականութիւնը :

Օրէնքը ծանր եկաւ, Կամայականութիւնը կրող նժարը նետեց օդին մէջ, ու Կամայականութիւնը ցնդեցաւ :

Ոտիկանութիւնը, Արդարութեան ու Օրէնքին սրաշօ՛ւեաները, կարգին ու իրաւունքին ներկայացուցիչները, տեսան սեւ սիւքն ու վկայեցին .

Յափշտակուած թերթը ոտիկանութեան հրամանով նորէն կարգալ սկսաւ Պզտիկ Մարդը, ի՞նչ կ'ըսեմ, Մե՛ծ Մարդը :

Այդ բոպէին սկսաւ սակայն հալածանքը. հրէ՛չ հալածանքը. հալածանքներուն, ամենավատը, անտեսակա՛նը . . . :

Ի՞նչ եղաւ .

ՈՎՍԱՆՆԱԻՆ յաջորդեց ԲԱՐՁ Ի Մէնջ աղաղակը .

«ԿԵՑՑԻ՛ ԲԱՇԱՆ ԼՈՒՅ» ,

«ԱՆԿՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ» մնաց, ու պիտի մնայ, մինչեւ որ Օրէնքը տիրէ բաղարձակ :

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ի Գ Ր Ա Ն Ե Ր Կ Ա Թ Ի

(Կարապետ Պիլեգրիմի)

Գ Ի Ր Ք Բ .

Գ .

(Պայքար Յունաց լեռ)

Տիգրան Երկաթի գեգեցիկ գործու-
նէութիւնը՝ Աստիկէի սրդի մայրաւա-
ղափին մէջ — գոր ինք այնքան հրա-
պուրիչ կը գտնէր որքան Աթէնքը Պերիկ-
լէսի ու Դեմոսթենէսի օրով—կ'ընծայէր
իբեմ խիստ սփոփարար փոխարինում-
ները : Հելլէնաց մէջ իր հիանալի
պայքարին առաջ բերած հետեւանցնե-
րէն՝ յստակօրէն կ'երեւէր թէ իր հայ-
րենասիրական հսկայ ծրագիրները՝
բոլորովին նիւթական ու գիտական
սկզբունքներու վրայ հիմնուած՝ որոնց
գործադրութիւնը կը փորձէր — ո՛չ մի-
այն արդիւնաբեր էին, այլ եւ պիտի
անվիրայօրէն հայկական դասը գրա-
հապատէին, այնպէս որ բարբարոս-
ները կամ դահլիճները պիտի հարկա-
դրուէին զայն ձեռք առնելու կամ ա-
նոր վրայ կռուելու :

Այսպէս, Յոյն մամուլը ջերմօրէն

կ'ընդունէր, իր մեծագոյն օրաքերթ-
րուն ձայնովը, Երկաթի առաջարկը
Յունաստանին ու Հայաստանին միջեւ
դաշնակցութեան, հրատարակելով այս
մասին յօդուածներու շարք մը, որոնք
անագին յուզում մ'առաջ բերին բո-
վանդակ ցամաքին վրայ:

Կարելի է գտնել այս յօդուածները
Ա.թէնի 1896ի օրաքերթերուն, մաս-
նաւորապէս ԱՍՏիին մէջ, ԺՕԲԺ ԱՏԲԱ-
ԴԻԺԻՍի ստորագրութեան տակ, որոնք
կը նկարէին Անասովի բոլոր նա-
հանգներուն մէջ ու նոյնիսկ Կ. Պօլիս
գործուած ջարդերն ու թալանները:
Այս ընթերցումը կը վերաժարժէր Յայ-
ներուն դարաւոր ոխը Թուրքերուն դէմ ու
յիշելով իրենց բուն ժողովուրդին նա-
հասակութիւնը մինչեւ Անկախութեան
փառաւոր պատերազմը — կ'սկսէին
վերգգալ յարձակումներու անզուսպ
պէտքը, վրէժը հանելու համար թէ' Հա-
յաստանի իրենց եղբայրներուն եւ թէ'
Կրետացիներուն, անգամ մ'ալ մատրոն-
չելով քաղաքակրթութեան ու քրիստոնե-
այ մարդկութեան յաղթանակին հա-
մար, ԽԱՉին անունովը:

Ապստամբութիւնը սակայն կը
խմուէր ի Կրետէ ու Ազգային Միու-
թիւնը (*էթնիկի էթերիա*) ուր իր ա-
թուն ունէր Տիգրան Երկաթ՝ հաւաստ
ունէր այդ հոշակաւոր յեղափոխական
կողմին մօտալուս բռնկումին վրայ՝ ա-
պրստամբեցնելու համար Մակեդոնիան,
արժանելու թուրք սահմանազուխնե-
րն ու հարկելու հելլէն կառավարու-
թիւնը պատերազմ յայտարարել Դրան
դէմ: Ապահովապէս, Կրետացիներուն
գերագոյն նիզը պիտի հպարտութիւնն ու
հայրենասիրութիւնը վառէր ամբողջ Հել-
լենականութեան (*Hellenismos*) որ արդէն
գերագրգռուած էր, ա'յնքան բարբա-
րաներու որքան Տէրութեանց եղեռնա-
գործ դիւրիին դէմ, նկատմամբ
խժղժաններուն ու կոտորածին Հա-
յաստանի, որ զինք պիտի վեհանձօրէն

դրդէ: պատշապանելու անհաւասար
կռուի մը մէջ Արեւելի բոլոր քրիս-
տոնեաները, զորս Օսմ. կայսրութիւնը
դեռ կը ննչէր բիւր ուժով, իր վնաս-
կան կործանումին նախընթաց օրը:

Դէպքերը, որոնք այդ կերպով կը
թուէին նեպիլ, պիտի նպաստէին ու-
րեմն քաղաքական ծրագրին մեր մեծ
հայրենասէրին, որ գաղտնապէս կը
հրահուէր խորհելով թէ ինք մասամբ մը
հասած էր իր ազգային նպատակին,
երաւսաւորելով մահամեծ Հայաստա-
նի՝ աջակցութիւնը վաղեմի արի ու
մեծամուն դաշնակիցներու որոնց վրայ
կուրնեցան մեր մեծագոր ինքնակալ-
ները, Տիգրան ու Տիգրան: Իրեն համար
խնդիր էր հիմայ երթալ Բաբելոն յու-
զելու Երուսալէմ ի նպատակ Յայներուն ու
Հայերուն, հրատարակութիւններով ու
դրդեցնող բանախօսութիւններով, հաս-
տատելու համար երկու սուրբ դասերուն
օրինաւորութիւնը, անոնց յաղթա-
նակին համար ձեռք բերելու Արեւմը-
սեայց քով, եթէ ո'չ նիւթական գէթ
բարոյական ուժ մը: Յետոյ, մեր յեղա-
փոխականները համոզելու որ իրենք
բացարձակ պէտք ունին իրենց բոլոր
նիզերն ուղղելու դէպ ի Մայր-Հայրե-
նիքը, պայթեցնելու համար ապստամ-
բութիւնը — մասնաւորապէս Կիլիկիա-
նոր միայն պիտի մեզի թոյլ տար բա-
նաւոր ու օգտակար կերպով պատշապ-
անելու մեր արդար պահանջումները: Կը
մաղթէր որ այդ ապստամբութիւնը մի-
եւնոյն ասեմ տեղի ունենայ յունաք-
ական պատերազմին հետ որ կը պատ-
շատէր, որպէս զի Հայաստանն ըլ-
լայ «Հելլենականութեան Պատար»ը,
ինչպէս որ ինք կանխաւ բաժն էր Ա-
թիւնացիներուն — դժբաղդաբար, իր
արդէն սկսած բաւակցութիւնները, այս
մասին, մեր կուսակցութեանց քանի մը
բարձր ներկայացուցիչներուն հետ, վի-
ժեցին ի վերջոյ:

Տիգրան Երկաթ պահ մը յուսա-

ցած էր թէ մեր կուսող դասակարգ-
ներուն ֆոլ պիտի նեցուկ գճնէր, բար-
ձր հրամանասարուքինը պիտի ունե-
հար ու իրեն պիտի հայթայթուէր հար-
կանոր դրամը. այս ամենն անհրաժեշտ
էր իրեն՝ կարենալ գործելու համար
մեծ սանդուխի մը վրայ, բարենորո-
գելու մեր կուսակցութիւններն ու ամ-
բողջովին ձեռափոխելու մեր յեղափո-
խութեան գործողութեան կերպարանը,
դրոճելով հոն ամենի շարժում մը որ
եսեւէն պիտի ֆաւէր բերէր բոլոր դա-
սակարգերն ու բարձր կղերականու-
թիւնը:

Մենք գիտեմք թէ այս իշխանու-
թեան կը ցանկար միակ օգտին համար
իր հայրենակիցներուն, որոնց լուս կը
սեսնէր թէ բոլոր անկեղծ հայրենասի-
րութիւնը կը բախէր անյաղթելի արգելի-
ներու կամ ի գուր կը նզովէր ամուլ
նիզի մը ներքեւ, որովհետեւ զօրեղ ու
լուսամիտ վարիչ մը, արաջնորդ մը կը
պակսէր լոկ: Անի բացարձակ վսա-
հութիւն մ'ունէր ազդեցութեանը վրայ
իր յղացումներուն, որոնք, բոլորը կը
հանգչէին վաղեմի ու արդի ժամա-
նակներուն ամենաւերջի, պատմական
փորձերուն վրայ ու կ'զգար թէ իրմէ
զատ ո՛չ ոք, այն ժամուն, պիտի չը
կրնար զանոնք ի գործ դնել, կամ օգ-
տուիլ: Ասկէ զատ, տղայ հասակէն ի
վեր իրեն սիրացող խորհրդաւոր ու
գերմարդկային ուժ մը՝ կը մղէր զինք
հսկելու իր Ազգին փրկութեան, նպաս-
տաւորելով զանի հաննարի բոլոր բա-
րիկներովը, զորս իր վեհագոյն բնու-
թիւնը կը շուայէր իրեն, զանի ազա-
տելու համար մեր թեմափրկներուն վայ-
րենի նկարագրէն ու վերածնելու հա-
մար նոր կեանքով:

Հայերուս ֆոլ իր անյաջողութենէն
եսք ի՞նչ քրաւ:

Որոճեց դարձեալ հեշտապնդել իր
հայրենասիրական դերին, շարունակե-
լով թէկուզ ինք միմակ, իր ձեռնար-

կած պայխարն իր ծրագրին շուրջը, որ
լեցուցած էր ու զարմացուցած ամ-
բողջ աշխարհը. մնալ անձնուէր բա-
րեկամ մը կուսակցութեանց ու մօտէն
հետեւիլ անոնց շարժումներուն (իր հա-
ւասարմութիւնն անոնց նշանմամբ կամ
աւելի նիւզը, հայուն վարկը բարձր
բռնելու իր յարատեւ հոգը, զանի
մղեց իսկ ջատագովելու Դրօսակեան-
ներուն որդեգրած ոնիրներու դու-
րիւնը, Փարիզեան մեծ օւարեթի մը
մէջ): Եւրոպայի մէջ շինել իրեն հրո-
ջակաւոր անուն մը, իբրեւ գրող, իբ-
րեւ գիտն ու իբրեւ ախոյեանն իր
դասին, ջանալ ամենէ առաջ, իր
հրատարակութեանց մէջ, ամրացնելու
Հայ Ազգին ընկերային, մտաւորական
ու ֆաղափական բարեօրոնը, արագ
արագ պսակումին համար անոր բարձր
նակասագրին, վերջապէս իր համոզ-
կեր նաւերով ու յայտարարութիւննե-
րով վերարթնցնել մարտային վաղեմի
ու հպարտ զգացումը մեր ցեղին, դա-
րեւէ ի վեր, բարբարոսներու լուծին
սակը ջնջուած կամ խաբարուած: Երբ
որ ժամանակը պիտի հասունցուցած
ըլլայ բոլոր այս առաս սերմերը,
սխանչացած ու արբեռ ժողովուրդը
պիտի ինքնին վազէր իր ետեւէն, բար-
գաւանման նամբուն վրայ, պատիւի
դատը: Կը յուսար թէ իր տուած դա-
սերը մանաւանդ պիտի գործէին ամե-
նաբարեւար ազդեցութիւնը՝ մտքին վրայ
մեր ուսումնասէր երիտասարդութեան
դեռ Եւրոպական դպրոցներուն ու հա-
մալսարաններուն մէջ ապրող, որ
դրական վարդապետութիւններով արդի
օգտակար գաղափարներով ու առողջ
սկզբունքներով, պիտի անուրես ըմբո-
նէր իր պարսկերը դէպ ի հայրենիք ու
եռանդով պիտի պատասխանէր ՏԻԳՐԱՆ
ԵՐԿԱԹԻ ՀԱՊՈ՛Ն Ի ԶԷՆ ին:

Ս. ԲԻԻՐԱՏ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

— Ոչինչ այնքան քաղցր եւ բեղմնաւոր է գեղեցիկ գործերու մէջ, որքան մարդոց հաւատալը. այն ատեն միայն կրնանք անոնց համար բոլոր այն բաները ընել զոր կը յուսանք թէ անոնք մեզ համար պիտի ընէին:

— Ի՞նչ բանի կը ծառայէ խելքը, քանի որ անմիտներուն յաջողութեան վերայ իսկ մտածել կուտայ: **ԿԵՕԹԷ**

Անկումէ իսպառ ազատ ըլլալը չէ՛ մարդկային փառքը, այլ ամէն անկումէ ետք միշտ կանգնելը: **ԿՕՆՓԻԻԿԻՈՍ**

Ով որ իբաւունք ունի, զօրաւոր է. եւ ով որ զօրաւոր է, կ'արհամարհէ բռնութիւնը: **ՀԻԻԿՕ**

Ինչպէս որ կարելի չէ ծովի ջուրերուն նորէն զէպի ծովեզրը մօտիւր արգելել, նոյնպէս կարելի չէ արգելել միտքը գիտակից ամբոխին, որ գաղափարով մը կը գրաւուի: **ՀԻԻԿՕ**

— Խիստ մեծ նուաստութիւն ու վրտանդաւոր բան է փառասիրութեան համար այնպիսի անձերու հետ կապուիլ՝ որ մեծ աստիճանի ու վիճակի մարդիկ ըլլան: (**)

— Օրէնքը այն բաները կը սահմանէ որոնք ընդհանուր ու հասարակաց բարիքին ու շահուն համար անհրաժեշտ են: **Շ. ՄՕՆԹԷՎԷՔԵՆ**

Ընկերական գաղափարի կատարելագոյն իրագործութեան անհնարաւորութիւնը այս աշխարհիս մէջ, երբէք չէ պիտոյ դարեցնէ ձգտող մարդերի գործունէութիւնը, ամէն արգելափակ, ամէն խափանարար պատճառ, պէտք է աղբիւր եւ շարժառիթ լինի մի նոր գործունէութեան — մի նոր գօրութեան:

Սուտ խաղաղասիրութիւնը, որի տակ, որպէս գայլ ոչխարի զգեստով, թագնուած է անձնական օգուտ ու փառք, մենք մեծա-

(**) Հասցա երե այդ կապուողը ՊԷՅ ղ՛ըրա՞յ...: **Մ. Խ.**

բում ենք (այսպիսիները) «եզուխտ» պատուանունով: (1)

Օրհնեալ է պատերազմը, թո՛ղ լինի նա հզօր, անխնայ, ազնիւ ու բարեխիղճ. նա, որ փախչում է ազնիւ պատերազմից, մարդ չէ բարոյապէս, այլ մի թշուառ արարած կնամարդի բնաւորութեամբ: **Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ**

Վտանգը կ'անհետի երբ համարձակինք անոր նայել:

Պարտքերն ա՛յն ատեն միայն ծանրակշիռ են երբ զանոնք կատարելը ծանր կը նստի մեզ: **ՇԱԴՈՊՐԻԱՆ**

Ով որ նկարագրի չունի, մարդ չէ, իր է: **ՇԱՆՅՕՈՒ**

Անկումը կը վհատեցնէ միայն զանոնք որ յաջողութեան արժանի չեն: **Շ. ՇԱՐԷՅ**

Եթէ մենք իբրեւ անհատ չի գաւաճանենք մեր գաւանած սկզբունքներուն, շատ բան կարող ենք անել:

Եթէ մենք կուզենք ծառայել ո եւ է գործի, նախ պարտաւոր ենք կուրօրէն հաւատալ այդ գործի ճշմարտութեանը. եթէ մենք յոյս չունինք մեր ուժերի վրայ, պէտք չէ ասպարէզ նետուիլ, իսկ նետուելէ յետոյ՝ պէտք է մղել կուրը. զի եթէ մարդ կամք չունի՝ թող չի կարծէ թէ մազի չափ կրնայ ազդել ուրիշի կամքին վրայ: **ՇԻՐՎԱՆՉԱՏԷ**

Ցած եւ խորամանկ վատերը խաւարին մէջ թռչող նետերու կը նմանին. (*)

(1) Ներե՛, աննա՛հ Նաչրանդեան, մեր երանելի Եգիպտոսի մեջ այդպիսիներո՛ւ կը յանձնեն առաջնորդութիւնը: **Մ. Խ.**

(*) Ակունքը իսուի Անթաղ Դիակիւն. երե ՌԸՆԱՆ ողջ ըլլար, Պատուոյ Ատեանիւն պիտի կանցուէր ապանովաբար: **Մ. Խ.**

Շատերուն քրտինքը՝ միջոց կուտայ կարգ մը մարդերու ազնուական կեանք վարելու: (1) Ե. ՌՆՆՆ

Իրաւունքն ալ իր բարկութիւնն ունի, եւ իրաւունքին բարկութիւնը յառաջդիմութեան տարրերէն մէկն է:

Ժողովուրդ մը երբ իր ինքնութիւնը եւ ազատութիւնը կը կորսնցնէ, անարժան է, նաեւ անկարող՝ կանգնելու:

Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ցաւալի է որ գիտունի գրչով լուծելիք խնդիրներն դերցակի մկրատով կը կարուին շատ անգամ: (2) Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Իրենց գծուծ փառքին համար Ազգ, Հայրենիք շահագործողներուն ներկը՝ այդ սրբազան անուններուն դէմ դաւաճանել է:

ՊԱՐԹԵԼՇՄԻ

Պայքարը յաջողութեան պայմանն է, մեր թշնամին մեր օգնականն է:

ՍԸՐ ՌՈՊԷՐԹ ԲԻԼ

Պարկեշտ դործիչի մը զգալ կարծած մեծագոյն հաճոյքը՝ զինքը զրկող հասարակութեան մը ուրախութեան պատճառն է:

ՎՈՂԵՆԻ

Հաւաքեց Ա. ԶԱՐԵԶԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Ա Զ Գ Ա Յ Բ Ն

— ԱՂԵՄ. ԺՈՂՈՎՐԴ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ. ԼՍԱՐԱՆԻՆ Ի նպատ շրջաբերութեան հանուած 2 զըշնոց նուիրատուները կը յուսանք թէ տեղիս ընթերցասէր հասարակութեան ջերմ քաջակերանքին պիտի արժանանան, այն գերագոյն պատճառով որ ժողովուրդի բարօրութեան համար հանրային ընթերցարանները նոյնքան կարեւոր են որքան հանրային լսարանները:

Նոյն քաջակերանքը կ'սպասուի նաեւ Հայ Նուագածուաց Խմբին տոմսերուն համար, խումբի մը որուն համար կարժէ ամեն զոհողութիւն:

— ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՌԻ Ե. ՊԷՆԼԵԱՆ ամսոյս 31ին շաբաթ իբիկունը ԳԸՐՄԸԶԸ ԶԸԶԱՆ (Կարսի Թղթարպետական) 5 արարով թատերախաղը պիտի ներկայացնել սայ ի նպատ իրեն եւ մասնակցութեամբ տեղիս Հայ Նուագածուաց Խումբին, որ

(1) Արդեոք սա մեր Եւրասիական թաղականներուն կ'ակնարկէ. Ծ. Խ.

(2) Ն. Զամովքիին միլիտարական: Ծ. Խ.

մեզի պիտի լսեցնէ ազգային ու օտար ընտիր կտորներ:

Վստահ ենք թէ մեր թատերասէր հասարակութիւնը պիտի քաջալերէ համարելի հայ դերասանուհին, վայելելով հանդերձ հայկական նուագածութիւնը լսելու հաճոյքը:

— ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ մը կազմուած է քաղաքիս մէջ, 4 ջութակ 4 մանսօյին 3 կիթառ եւ 1 ֆլիւթ, լոկ 12 անդամներէ բաղկացած: Հայ Նուագածուաց Խումբին Մախարոն սկսած է անոնց դասախօսել ամսոյս 12էն ի վեր, իտալական աղջկանց վարժարանին մասնաւոր սրահին մէջ:

Փափաքողները կրնան դիմել նոյն վարժարանը, Կերակի օրերը (յ. մ.) ժամը 2-3ին:

Յաջողութիւն եւ յարատեւութիւն:

ԿԻԼԻԿԻԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՀԱՃԸՆԵՆ վերջերս ստացուած նամակի մը կը խաղենք:

Հայերուս կացութիւնը կը վատթարանայ օրէ օր. կառավարութեան ճնշումը կը շեշտուի. հարկահաւաքիչները անօթի կեղեքիչներ են. ժողովուրդը տնտեսապէս փճացած, ժամանակէ մ'ի վեր քաղաքիս մէջ ու շրջակայքը աբրող արմտիքի սղութիւնէն, սով չ'ըսելու համար, ահուլի կերպով կը տառապի: Եթէ կայ միթիթարական բան մը, կրթական վիճակնիս է ան:

Կեդրոնական վարժարանը, որ կը կառավարուի ամերիկեան միսիօնարներէն ու մեր մասնակցութեամբ, կը յաճախեն երթեւեկ աշակերտներ. գիշերօթիկներ ալ կը պահուին. հաւասարապէս Հայերէնին հետ կաւանդուին Թուրքերէն, Ֆրանսերէն ու Անգլիերէն լեզուները:

Մեր երեք եկեղեցիներուն երեք եկեւեռ վարժարանները բարեկարգ են:

Ս. Յակոբայ վանքին մէջ ունինք Որբանոց մը, ուր կը խնամուին ու կը դաստիարակուին 50 որբեր. հոն կը դասախօսէ բնիկ Պ. Յովսէփ Նալբանդեան ուսուցիչը: Մեծ Ծուկայի մօտիկ թաղին մէջ կայ նաեւ իտալական Որբանոց մը փոքրիկ նոյնպէս լաւ: Տեղիս կաթօլիկները կառուցին շքեղ եկեղեցի մը որ գրեթէ հաւատացեալ յաճախորդ չունի, կաթօլիկներուն թիւը նուազելով օրէ օր: Մայրապետանոց մ'ալ ունին:

Յաջորդով ուրեշ կարեւոր տեղեկութիւններ պիտի գրեմ:

ՎԱՀՈՒԿ

ԿԱՐԵԻՈՐ Ա.ՉԴ

Եզիպտոսի կառավարութեան ու պետական կարեւոր անձնաւորութեանց եւ նոյն իսկ մասնագէտներու կողմէն գնահատուած Եզիպտոսի Քարսէսը, որուն վրայ ժամանակին ա՛յնքան զովեստներով խօսեցաւ ՓԱՐՈՍը եւ զոր պատրաստած է մեր համակրելի երկրաչափներէն ՏԻԱՐ ՌԱՅԱՅԷԼ ՆՇԱՆՆԱՆ, մինչեւ ցարդ պատրաստուած քարտէսները կը գերազանցէ:

Այդ յարգի ու ընտիր քարտէսէն ունենալ փափազողները կրնան դիմել ՏԻԱՐ ՀՈՎԵԼ ԿԱՐԻՆԵԱՆԻ քով, Փիւնիկի խմբադրատունը կամ Արաբի տպարանը:

Գինն է 25 զրուշ ողջ:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՍԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրիացի հայ երիտասարդ մը, սուրիներէ ի վեր Եզիպտոս հաստատուած,

Եւրոպայիան քանի մը լեզուներու հմտաց, ու քաջ արարագէտ միանգամայն, պատրաստ է վաճառականաց արարեւէն թղթակցութիւնները կատարել գոհացուցիչ պայմաններով:

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրատուն կամ «ԱՐԱՔՍ» ի սպարանը:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն եւ թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ,

ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային եւ Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Իւրաճատչելի գներ եւ պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մեկնիէ Ապրասարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանկ